ԱՐՄԱՎԻՍԲԱՆԿ ARMSWISSBANK

Հավելված 2
Հաստատված է
04.12.2025թ.-ի Տնօրինության 77-Լ որոշմամբ
Ուժի մեջ է 01.01.2026թ.-ից

ՖԻԶԻԿԱԿԱՆ ԱՆՁԱՆՑ «ՀԱՄԱԼՐՎՈՂ» ԺԱՄԿԵՏԱՅԻՆ ԱՎԱՆԴԻ ԴԻՄԱՑ ՎՃԱՐՎՈՂ ՏԱՐԵԿԱՆ ՏՈԿՈՍԱԴՐՈՒՅՔՆԵՐ

Ուժի մեջ է 01.01.2026թ-ից

Արժույթ	Ավանդի նվազագույն գումար	Տոկոսագումարի վճարում	ժամկետ			
			33-92 օր	93-182 օր	183-367 օր	368-548 օր
AMD	10,000,000	Ժամկետի ավարտին	6.00%	7.00%	8.00%	9.00%
		Ամսական	6.00%	6.75%	7.75%	8.75%
USD	20,000	Ժամկետի ավարտին	1.5%	2.25%	2.75%	3.50%
		Ամսական	1.5%	2.25%	2.5%	3.25%
EUR	20,000	Ժամկետի ավարտին	0.25%	0.75%	1.00%	1.75%
		Ամսական	0.25%	0.75%	0.75%	1.25%

1. 30 մլն ՀՀ դրամ (կամ համարժեք այլ արժույթ) և ավել գումարի դեպքում տոկոսադրույքները սահմանվում են պայմանագրով:
2. Հաճախորդն իրավունք ունի մինչև ավանդի գործողության ժամկետի 2/3-ը փոփոխելու՝ համալրելու ավանդի գումարը, ընդ որում՝ յուրաքանչյուր համալրումը չի կարող պակաս լինել 1մլն ՀՀ դրամից կամ համարժեք գումարից: Ավանդի գումարի ավելացման հանրագումարը չի կարող գերազանցել սկզբնական Ավանդի գումարի կրկնապատիկը:
3.Հաճախորդն իրավունք ունի ավանդային պայմանագրով նախատեսված ժամկետից շուտ լուծել ավանդի պայմանագիրը և ետ ստանալ ավանդը: Այդ դեպքում Բանկը Ավանդատուի կողմից տրված հանձնարարականի հիման վրա ապահովում է Ավանդի մասնակի վերադարձը մինչև Ավանդի սկզբնական գումարի 50 (հիսուն) տոկոսի չափով՝ Ավանդատուի առաջին իսկ պահանջով առանց վերահաշվարկի , իսկ մնացած գումարի չափով կատարում է վերահաշվարկ՝ ավանդի գումարից գանձելով արդեն իսկ վճարված տոկոսագումարները, և վճարելով տվյալ պահին գործող և Բանկի կայքէջում հրապարակված՝ Ավանդի արժույթով ցպահանջ ավանդատեսակի համար Բանկի կողմից հաստատված տարեկան տոկոսադրույքին համապատասխան չափով հավելագրված տոկոսագումար:
4.Տոկոսային եկամուտները հարկվում են համաձայն «Եկամտահարկի մասին» ՀՀ օրենքի:
5.Այլ լրացուցիչ պայմանները կարգավորվում են պայմանագրով կամ լրացուցիչ համաձայնագրով:
6.Հաճախորդն իրավունք ունի իր կողմից ներդրված ավանդի գրավով ստանալ վարկ՝ Բանկի կողմից սահմանված պայմաններով: Եթե հաճախորդը վարկի ստացման դիմումը ներկայացնում է մինչև տվյալ բանկային օրվա ժամը 12:00-ը, ապա վարկը տրամադրվում է աճախորդին մինչև տվյալ

Հավելված 2
Հաստատված է
04.12.2025թ.-ի Տնօրինության 77-Լ որոշմամբ
Ուժի մեջ է 01.01.2026թ.-ից

բանկային օրվա գործառնական օրվա ավարտը: Եթե հաճախորդը վարկի ստացման դիմումը ներկայացնում է տվյալ բանկային օրվա ժամը 12:00-ից հետո, ապա վարկը տրամադրվում է հաճախորդին հաջորդ բանկային օրվա ընթացքում:

ՖԻԶԻԿԱԿԱՆ ԱՆՁԱՆՑ ԲԱՆԿԱՅԻՆ ՀԱՇԻՎՆԵՐԻ ՄՆԱՑՈՐԴՆԵՐԻ ԴԻՄԱՑ ՎՃԱՐՎՈՂ ՏԱՐԵԿԱՆ ՏՈԿՈՍԱԳՐՈՒՅՔՆԵՐ

Ուժի մեջ է 01.01.2026թ-ից

ԱՐԺՈՒՅԹ				
ՀՀ դրամ	ԱՄՆ դոլար	Եվրո	ՌԴ ռուբլի	Շվեյցարական ֆրանկ
4.00%	0.70%	0.45%	2.50%	-2.00%

Տոկոսագումարը հաշվարկվում է, եթե ամսվա ընթացքում հաշվի միջին օրական մնացորդը կազմում է նվազագույնը 500,000 ՀՀ դրամ, 2,000 ԱՄՆ դոլար, 2,000 Եվրո, 150,000 ՌԴ ռուբլի: Տոկոսագումարը վճարվում է հաշվարկմանը հաջորդող ամսվա առաջին բանկային օրը:

Ֆիզիկական անձանց գծով հաշվարկված տոկոսագումարից պահվում է 10.0% եկամտահարկ:

«ԱՐՄՍՎԻՍԲԱՆԿ» ՓԲԸ
Հասցե՝ Վ. Սարգսյան 10, Երևան 0010, Հայաստանի Հանրապետություն
Հեռ.՝ +374 60 757 000
Ֆաքս՝ +374 10 540 675
Էլ-փոստ՝ info@armswissbank.am